

Նախագահ Սերժ Սարգսեան. «Եթէ ի վերջոյ որոշենք, որ թեկնածութիւնս պիտի առաջադրուի, ապա ատիկա իմ կողմէ պիտի ըլլայ մէկ յաւելումով»

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը առաջին անգամ ըլլալով վերջերս հրապարակայնօրէն չէ բացատրած, որ պիտի առաջադրուի վարչապետի պաշտօնին: Այդ մասին ան կարճ մեկնաբանութիւն տուած է «Թերթ» կայքին՝ շեշտելով, որ նախապէս կատարուած յայտարարութիւնը, թէ «մէկ մարդը 2 անգամէ աւելի պէտք չէ դեկլարել երկիրը», հիմա շատ կը շահարկուի, քանի որ ընդհանուր պարունակէն դուրս կը բերուի:




«Երբ գործիչը կ'ուզէ քաղաքական յայտարարութիւն կատարել այն մասին, որ պիտի չըլլայ ինչ որ տեղ մը, ան կ'ըսէ՝ ես պիտի չըլլամ այսինչ տեղը, ինչպէս ես յստակ յայտարարած եմ, որ պիտի չըլլամ Հայաստանի Հանրապետութեան նախագահ», ըսած է նախագահ Սերժ Սարգսեանն ու ճշդած, որ խօսած է յաւակնութիւններու եւ պատկերացումներու մասին, ուրեմն ըսելիքը այլ հարթութեան վրայ է:

«Ես այսօր ալ չեմ յաւակնիր վարչապետի պաշտօնին: Բայց ես ինքզինքս նախապաշարումներով կամ քարացած մտածողութեամբ առաջնորդուող մարդ երբեք չեմ նկատեր: Ես չեմ կրնար հաշուի չնստիլ իրականութեան հետ եւ սեպել, որ չունիմ պատասխանատուութիւն ապագայի եւ ժամանակի մէջ մեր երկրի սահուն ընթացքին համար: Այսօր մենք մէկ կողմէ ունինք արտաքին քաղաքականութեան դրական արդիւնքներ, որոնք ամբողջական լուրջ պաշար կու տան, հասած ենք ներքին կայունութեան այնպիսի մակարդակի, որ արդէն դրականօրէն կը կանխորոշէ նաեւ տնտեսական ցուցանիշներու ուժեղացումը, բայց միւս կողմէ կարելի չէ հաշուի չառնել սպառնալիքները, որոնք սահմանադրական փոփոխութիւններուն ընթացքին, ցաւօք, միայն աւելցած են»:

Նախագահ Սերժ Սարգսեան տեղեկացուցած է, որ իր առաջադրման հարցով առկայ են բազմաթիւ քննարկումներ, եւ յայտնի չէ, թէ ե՞րբ քննարկումները կ'աւարտին :

«Եթէ ի վերջոյ որոշենք, որ թեկնածութիւնս պիտի առաջադրուի, ապա ատիկա պիտի ըլլայ իմ կողմէ մէկ յաւելումով՝ առ այն, որ սահմանադրական լիազօրութիւններու ամբողջական իրականացման գուցահեռ աւելի շատ ժամանակ պիտի յատկացնեմ երիտասարդ քաղաքական ղեկավար-գործիչներու մեր երկրի անցած տարիներու երեւցող ու չերեւցող ամբողջ փորձառութիւնը փոխանցելու գործին: Ասիկա խնդիր մըն է, որ այսօր չափազանց կարեւոր է: Բոլորս ընելիք ունինք քաղաքական նոր առաջնորդներու թրծման հարցով՝ անկախ անոնց կուսակցական պատկանելիութենէն, անկախ քաղաքական ներկայ դիրքաւորումէն», նշած է հանրապետութեան նախագահը:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ «ԱԲԱՆԴԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐ, ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱԿԵՐՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մարտի 22-ին Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու աջակցութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Սատենադարանում, տեղի ունեցաւ «Աւանդական արժէքներ, արդի մարտահրաւերներ» խորագրով մէկօրեայ երրորդ միջազգային համաժողովը, որը կազմակերպուել էր Աթոս լեռան ռուսական սրբավայրերի աջակցման բարեգործական հիմնադրամի կողմից: Համաժողովը բացուեց Տերունական աղօթքով, որից յետոյ լիագումար նիստի վարող «Ինտելեգալիա եւ զարգացում» հասարակական կազմակերպութեան նախագահ Արամ Սաֆարեանը կոնֆերանսի անցկացմանն աջակցութիւն բերելու համար մասնակիցների անունից երախտագիտութիւն յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մոսկուայի ու Համայն Ռուսիոյ Կիրիլ Ա. Պատրիարքին:



Համաժողովին աւանդական, ընտանեկան արժէքների, դրանց սպառնացող մարտահրաւերների, այս առնչութեամբ աշխարհաքաղաքական իրողութիւնների ներգործութեան, երիտասարդութեան աշխարհայեացքի ձեւաւորման վրայ հեռուստատեսութեան եւ սոցիալական ցանցերի ազդեցութիւնների վերաբերեալ զեկոյցներ ներկայացրեցին Հայաստանի եւ Ռուսաստանի փորձագէտներ, հասարակական գործիչներ եւ եկեղեցականներ:

Ձեկուցումներին յաջորդած քննարկումների աւարտին համաժողովի մասնակիցները շրջայց կատարեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, եղան Մայր Տաճարում եւ թանգարաններում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՊԱՅՔԱՐ»Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՅԵՏ



Իր վերահրատարակութենէն ի վեր «Պայքար» շաբաթաթերթը իր շուրջ կը համախմբէ հայրենի եւ սփիւռքահայ մտաւորականներ, որոնց համար մեր պաշտօնաթերթը գաղափարական հիմնարկութիւն մըն է, ուր մտքի ընկերներ կու գան միանալու, իւրաքանչիւրը իրմէ բան մը տալու, ուրիշ մը բան մը առնելու:

Արդարեւ, օգտուելով «Պայքար»ի Գործադիր խմբագիր՝ Ընկ. Յակոբ Վարդիվառեանի Լիբանան կատարած իր այցելութեան առիթէն, «Պայքար»ի աշխատակիցներ համախմբուեցան խորհրդածելու եւ առաւել եւս անոր ընծայելու գաղափարական սնունդ ու աւիւն:

Աթենքի ՄԷջ Տեղի Ունեցաւ Պերլինի Վեհաժողովի 140-ամեակին Նուիրուած Միջազգային Գիտաժողով

Մարտ 26-ին, Աթենքի մէջ, Կիպրոսի դեսպանատան մէջ դեսպանութեան մշակութային բաժնի եւ Հայ-յունական ուսումնասիրութիւններու կեդրոնի համատեղ նախաձեռնութեամբ ու «Հայաստան» հ/կ կեդրոնի համագործակցութեամբ, կազմակերպուեցաւ Պերլինի վեհաժողովի 140-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողով:



Գիտաժողովը կը կրէր «Պերլինի վեհաժողովէն 140 տարի անց. Մակետոնական եւ Կիպրական խնդիրներու ծագումը եւ Հայկական հարցը» անուանումը:



Բանախօսներն էին Աթենքի համալսարանի դասախօս Սպիրիդոս Պոլումիդիասը, Աթենքի համալսարանի դասախօս Անտրէաս Անտոնոպոլոսը, գրող, հետազօտող, Հայ-յունական ուսումնասիրութիւններու կեդրոնի քարտուղար Յովսէփ Քասեսեան, Մոսկուայէն հրաւիրուած «Ժամ» ամսագրի գլխաւոր խմբագիր, Մշակութաբանութեան դոկտոր, Մոսկուայի պետական մանկավարժական համալսարանի դասախօս Աննա Գիվարգիզեան, Յունաստանի իրաւաբաններու ընկերակցութեան վարչական խորհուրդի անդամ Աթանասիա Տոտիադին:

Գիտաժողովի համակարգողն էր գրող, Պատմական գիտութիւններու դոկտոր Լուքաս Աքելոսը:



«Էրտողան Անձամբ Հրահանգած Է Հայոց Ցեղասպանութեան Բանաձեւին Դէմ Պերլինի Մէջ Ցոյցեր Կազմակերպել» Կը Գրէ «Տեր Շփիկըլ»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան անձամբ հրահանգած է Գերմանիոյ մէջ բողոքի ցոյցեր կազմակերպել՝ յուլիս 2016-ին Պունտըթափակի մէջ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի որդեգրման դէմ: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես»՝ վկայակոչելով «Ահվալ» գործակալութիւնը, այս մասին կը գրէ գերմանական «Տեր Շփիկըլ»:

Գերմանիոյ ոստիկանութեան կողմէ ձայնագրուած հեռաձայնային հաղորդակցութեան մէջ կ'երեւի, թէ ինչպէ՛ս Էրտողան 1 յուլիսին՝ Պունտըթափակի մէջ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի որդեգրումէն մէկ օր առաջ կը հեռաձայնէ Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան երեսփոխան Մեթին Քիլունքին, որ այդ ժամանակ Պերլին էր եւ կը զբաղէր բողոքի ցոյցերու կազմակերպումով:

«Տեր Շփիկըլ» հրապարակած է Հեսսեն երկրամասի ոստիկանութեան կողմէ ձայնագրուած հեռաձայնային հաղորդակցութիւններէն մէկուն սղագրութիւնը, որ կ'արտօնէ ենթադրել, որ Էրտողան անձամբ կը ղեկավարէր բողոքի ցոյցերը:

Հեսսենի ոստիկանութիւնը կը լսէ, թէ ինչպէ՛ս 1 յուլիս 2016-ի ժամը 23:30-ին կապի մէջ կը մտնէ Էրտողանը՝ խօսելով Քիլունքի հետ: «Ինչպէ՛ս էք, պարո՛ն նախագահ», կը հարցնէ երեսփոխանը: Ապա կը զեկուցէ Պերլինի մէջ քննարկուող բանաձեւին դէմ բողոքի ցոյցերուն մասին՝ աւելցնելով. «Կը սպասեմ ձեր հրահանգներուն»:

Էրտողան կը պատասխանէ, որ պիտի կապուի Քիլունքի հետ եւ բարի գիշեր կը մաղթէ անոր:

Գերմանական պարբերականը կը նշէ, որ հեռաձայնային հաղորդակցութեան բովանդակութիւնը ապշեցուցած է Հեսսենի ոստիկանութիւնը, որ արձանագրած է, թէ ի՛նչ մեծ ուշադրութիւն կը դարձնէ Անգարան Հայոց ցեղասպանութեան բանաձեւին եւ ատոր որդեգրման դէմ Պերլինի մէջ կազմակերպուելիք ցոյցերուն, որ ատով անձամբ կը հետաքրքրուի երկրի նախագահը:

«Տեր Շփիկըլ» կը յայտնէ, որ ներկայիս հետաքննութիւն կը կատարուի՝ բացայայտելու Քիլունքի կապը Թուրքիոյ գաղտնի սպասարկութիւններուն հետ, այն բանէն ետք, որ 2017-ին տեղեկութիւններ յայտնուած էին, որ երեսփոխանը գումարներ կը տրամադրէ թուրք-գերմանական ազգայնական «Օսմանէն Ճերմանիա» խմբաւորման: Ըստ տեղեկատուութեան, գումարները օգտագործուած են քրտական խումբերու դէմ զինամթերք գնելու համար:

Պերլինի մէջ Հայոց ցեղասպանութեան բանաձեւի որդեգրումէն ետք շուրջ 1000 թուրքեր բողոքի ցոյց կատարած էին:

Ամփոփելով Պերլինի վեհաժողովին հայութեան վերաբերող հարցերը՝ Յովսէփ Քասեսեան մասնաւորապէս նշեց Հայկական հարցի միջազգայնացման եւ Օսմանէան պետական մեքանիզմի կողմէ հալածուող հայութեան իրաւունքներու ճանաչման կարեւորութիւնը:

Աննա Գիվարգիզեան խօսելով Պերլինի վեհաժողովի պատմական դասերու, Խրիմեան Հայրիկի «Երկաթ» շերտի-ի, Հայ ազգային ազատագրական պայքարի առաջին փուլի ձեւաւորման մասին, իր զեկույցն աւարտեց Հայրիկի պատգամով՝ «Ահա թողում ձեզ մշտախօս կտակ, որ հայր իր հայրենաստուր հողէն չբաժնուի, զի հողն պէտք է կենաց եւ մահու օր. պի՛նդ գրկէ հողը»:

Գիտաժողովին քննարկուեցան նաեւ Մակետոնական եւ Կիպրական խնդիրներու ծագման հարցերու եւ յետագայ զարգացումներու մասին:

XXX

Պերլինի վեհաժողովին մասին պիտի անդրադառնանք յաջորդ թիւերուն մէջ ինչպէս նաեւ ձեռնարկի մասնակցողներու էլոյթներուն մասին: Ն.Ա.

Ծաղկազարդի Տօնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի Մէջ



Կիրակի, 25 Մարտին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շուքով տօնախմբեց Ծաղկազարդը, որ կը խորհրդանշէ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի՝ մարդեղացեալ Աստուածորդի՝ Երուսաղէմ յաղթական մուտքը:

Հոգեւորագ օրուան առիթով Մայր Տաճարի մէջ, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Վարչա-տնտեսական բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Մուշեղ Եպիսկոպոս Բարայեանը: Այս մասին կը հաղորդեն մայր աթոռ Սուրբ Էջմիածինի Տեղեկատուական համակարգէն:

Ս. Պատարագին ընթացքին՝ Մուշեղ Սրբազան իր քարոզին մէջ անդրադարձաւ օրուան խորհուրդին՝ մասնաւորապէս նշելով. «...Այսօր, շուրջ երկու հազար

տարիներ յետոյ մենք հաւաքուած ենք այս սուրբ եկեղեցոյ մէջ՝ տօնախմբելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ: ...Շատերու համար այդ օրերուն Յիսուս եկած էր ֆիզիքական փրկութիւն պարգեւելու, իսկ շատերու համար Քրիստոս եկած էր հոգիի փրկութիւն պարգեւելու, ստուար, հոծ բազմութեան մը համար Ան թագաւոր էր, ոմանց համար՝ թագաւոր երկրի վրայ, իսկ ոմանց համար՝ թագաւոր երկնքի մէջ: «Ո՛վ է Ան», - կը հարցնէին բոլորը: Պատասխանը այստեղ էր՝ Ան Յիսուս Քրիստոսն էր, որուն հաւատացին շատերը, իսկ այսօր արդէն՝ միլիառաւորներ: Յիսուս Քրիստոսն էր, որ Իր կեանքը տուաւ Իր արարածներուն համար, որպէսզի ապրին անոնք եւ առաւել կեանք ունենան:

...Միւրեքներ, հաւատքը դէպի Ան, ով Իր կեանքը չխնայեց իւրաքանչիւրիս համար, տարածուեցաւ եւ հասաւ մինչեւ մեր օրերը: Եւ մենք այստեղ՝ այս սուրբ կամարներուն ներքոյ, այսօր կը տեսնենք, թէ ինչպէ՛ս մանուկներ, արք եւ կանայք, կը ցնծան, որովհետեւ այսօր մենք կը տօնախմբենք ծաղկազարդը, եկած ենք ծաղկազարդուելու այս տօնին խորհուրդով, եկած ենք միանալու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսին՝ Անոր մարմինն ու արիւնը ճաշակելով:

Սրբազանը, իր խօսքին մէջ, ողջունեց Ծաղկազարդի առիթով Մայր Տաճարի Ս. Խորանին սպասաւորող մանուկները, որոնք վաղ առաւօտեան ժամանած էին Ս. Էջմիածին Տաւուշի թեմի սահմանամերձ քաղաքներէն եւ



գիւղերէն՝ մասնակցելու Ս. Պատարագին եւ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութիւնը: Սրբազանը յորդորեց Ս. Պատարագի մասնակիցներուն՝ ըստ տէրունաւանդ պատուիրանին նմանուելու այդ մանուկներուն իրենց մաքրութեան, անմեղութեան ու պարզութեան մէջ, ունենալու շիտակ եւ մաքուր հոգի եւ պատրաստ ըլլալու օգնելու եւ կարեկից ըլլալու իրարու:

Ս. Պատարագի աւարտին՝ տաճարին մէջ գտնուող բոլոր մանուկները հրաւիրուեցան ատեան եւ, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարուեցաւ մանուկներու օրհնութեան յատուկ կարգ: Նորին Սրբութիւնը հայրապետական իր օրհնութիւնն ու բարեմաղթանքները փոխանցեց ներկայ մանուկներուն՝ աղօթելով անոնց անհոգ մանկութեան եւ երջանիկ ու աստուածօրհնեալ կեանքին համար:

Փրկէ՛ք Ֆրանսիայի Հայկական թանգարանը

Ֆրանսիայի Հայկական թանգարանը բացվել է 1953 թվականին Փարիզում, Հանրապետության նախագահի ներկայությամբ: Թանգարանում պահվում են արվեստի անգին գործեր, որոնցից մի քանիսը ցուցադրվել են Լուվրի թանգարանում: 1915 թվականի Մեծ Եղեռնը վերապրածների ժառանգների ջանքերով կազմված այդ հավաքածուն, 1978 թվականին հանձնվեց Ֆրանսիայի պետությանը և ճանաչվեց որպես հանրային սեփականություն: Այսօր Հայկական թանգարանը կործանման եզրին է:

Դիմում ենք պետությանը և խնդրում՝ հարգել իր կողմից ստանձնած պարտավորությունները տվյալ մշակութային ժառանգության հանդեպ և վերաբացել Հայկական թանգարանը:

Խնդրահարույց ցուցասրահներ ...

2011 թվականի օգոստոսին, թանգարանի զբաղեցրած փարիզյան առանձնատան վերանորոգման աշխատանքների պատրվակով, Ֆրանսիայի Մշակույթի նախարարությունը առաջարկեց Հայկական թանգարանին ժամանակավորապես ազատել իր ցուցասրահները և տեղափոխել հավաքածուն՝ հավաստիացնելով, որ աշխատանքների ավարտից հետո՝ 2012 թվականի մայիսին, այն նույնությամբ կվերադարձվի իր նախնական վայրը:

Սակայն, շենքի վերանորոգման ավարտից հետո, Հայկական թանգարանի վերադարձն արգելվեց, Մշակույթի նախարարությունը մերժեց ազատել այժմ մեկ այլ թանգարանի պահոց դարձած ցուցասրահները:

Հայկական թանգարանը իրական պայքար սկսեց իր տարածքի համար՝ անհազանգեց պետական համապատասխան ատյաններին, հորդորեց նախարարությանը կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն, չստացավ որևէ պատասխան:

Ավելին, 2014 թվականի սկզբին, շենքում միտումնավոր փոխվեցին փականները: Ներկա դրությամբ, Հայկական թանգարան մուտք



գործելն այլևս անհնար է, և ոչ ոք չգիտի, թե ինչ ճակատագրի է արժանացել հավաքածուի՝ ներսում մնացած մի մասը:

Ֆրանսիայի Հայկական թանգարանը Հայ Ժողովրդի ճակատագրի վկաներից մեկն է:

Վտանգված է յուրահատուկ մշակութային մի ժառանգություն, որն ընդգրկում է 3000 տարվա պատմություն և շուրջ 1 200 արվեստի գործ՝ փրկված Մեծ Եղեռնը վերապրածների կողմից, երբեմն, իրենց կյանքի գնով:

Այսօր, մշակութային այդ ժառանգությունը անհետանում է: Նրա լուռ գերեզմանավորը իշխանությունն է, որն ի դեպ պատրաստվում է 2015 թվականին Մեծ Եղեռնի հարյուրամյակին, հարգանքի տուրք մատուցել հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Françoise Nyssen, հանուն Պատմության, հանուն Մշակույթի, հանուն Ֆրանսիայի կողմից ընդունված և ճանաչված ժառանգության հանդեպ հարգանքի, փրկէ՛ք Ֆրանսիայի Հայկական թանգարանը և թույլ տվեք նրա վերաբացումը:

«Անհրաժեշտ է Աջակցիլ Լեռնային Ղարաբաղի Տագնապի Խաղաղ Լուծման՝ Միջազգային Սկզբունքներու Հիման Վրայ» Կ'ըսէ Մեքուրթա

Անհրաժեշտ է աջակցիլ Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման՝ հիմնուելով միջազգային սկզբունքներուն վրայ, որոնց շուրջ համաձայնութիւն գոյացած է:



Ազրայէճանական «Թրենտ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Ազրայէճանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռայթը Մեքուրթա՝ Ազրայէճանի մէջ Ամերիկեան առեւտրական պալատի տարեկան գործնական ընթրիքին ընթացքին, որ նուիրուած էր երկրին մէջ դիւանագիտական իր առաքելութեան աւարտին:

«Մենք պէտք է յիշենք Լեռնային Ղարաբաղի շարունակուող տագնապի եւ միջազգային համաձայնեցումը սկզբունքներու հիման վրայ ատոր խաղաղ լուծման աջակցելու անհրաժեշտութեան մասին», ըսած է դեսպանը:

ՀՀ Սփիւռքի Նախարարը Մասնակցեցաւ Թորոս Թորանեանի Ծննդեան 90-ամեակին Նուիրուած Ցերեկոյթին

ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ Հայաստանի Գրողներու միութեան նախաձեռնութեամբ մարտ 27-ին Հայաստանի Գրողներու միութեան մէջ տեղի ունեցաւ արձակագիր, բանաստեղծ, հրապարակախօս Թորոս Թորանեանի ծննդեան 90 ամեակին նուիրուած ցերեկոյթ:



Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանտյ Յակոբեան՝ նշելով, որ մեծանուն գրողին կը ճանչնայ ու անոր գործունէութեան տեղեակ է դեռեւս 1980-ական թուականներէն:

«Լինելով սփիւռքահայ յայտնի մտաւորական՝ Թորոս Թորանեանը անգամ Խորհրդային Հայաստանի տարիներին մեծ անուն էր վայելում Հայրենիքում, ընդունուած ու սիրուած էր: Ուրախ եմ, որ երբեմնի դրախտային Հալէպը պատկերացրել էմ հէնց Թորոս Թորանեանի կերպարով: Ծնուելով Հալէպում, եկաւ Հայաստան բժշկական կրթութիւն ստանալու, սակայն իր յետագայ կեանքն ու գործունէութիւնն ուղղեց մարդկանց հոգիների բուժմանը, նուիրուեց հայ համայնքին ու Հայ դատի արդարացի լուծմանը», -նշեց Սփիւռքի նախարար Հրանտյ Յակոբեան:

Նախարարն ընդգծեց նաեւ, որ սուրիահայ մտաւորականն անցաւ աշխարհի միջօրէականներով, եղաւ Սփիւռքի հայ համայնքներու մէջ, եւ ինչպէս ինք ձեւակերպած է, հրաժարեցաւ «թափառական կեանքէն» իր ողջ գերդաստանով վերջին տարիներուն հաստատուեցաւ Հայաստանի մէջ՝ վայելելով Հայրենիքի ջերմութիւնն ու սերը: Սփիւռքի մէջ հայանպաստ գործունէութեան, հայապահպանութեան, Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման գործին մէջ ունեցած նշանակալի աւանդի համար Սփիւռքի նախարար Հրանտյ Յակոբեան Թորոս Թորանեանին յանձնեց ՀՀ վարչապետի յուշամետալը:

Հայաստանի գրողներու միութեան նախագահ Էդուարդ Միլիտոնեան իր խօսքին մէջ նշեց, որ անգամ այս պատկառելի տարիքին գրող-հրապարակախօսն իր գրիչը վար չի դնէր, կը շարունակէ իր աւանդն ունենալ Հայրենիք-Սփիւռք կապերու սերտացման գործին մէջ:

ՀԲԸՄ Հայաստանի ներկայացչութեան փոխտնօրէն Յովիկ Եորդեկեան կարեւոր համարեց Թորոս Թորանեանի գործունէութիւնը Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան մէջ՝ որպէս երկարամեայ անդամ, եւ պարգևատրեց միութեան յուշանուէրով: Այնուհետեւ ելոյթներ ունեցան «Հայկական Հանրագիտարան» հրատարակչութեան տնօրէն Յովհաննէս Այվազեան, յայտնի գրականագէտներ, արձակագիրներ: Ընթերցուեցան հատուածներ գրողի ստեղծագործութիւններէն: Շնորհակալութիւն յայտնելով ներկաներուն՝ Թորոս Թորանեան նշեց, որ իր ամբողջ կեանքին մէջ, գրական ստեղծագործութեան առանցքին մէջ եղած է Հայրենիքը, եւ եթէ հնարաւորութիւն ունենար կրկին լոյս աշխարհ գալու, կը ցանկար ծնիլ եւ ապրիլ միայն Հայաստանի մէջ:

ՀՀ Պաշտպանութեան նախարարութիւնը կը հրապարակէ Զինուած ուժերու զարգացման ծրագիրը



Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակած է Զինուած ուժերու զարգացման եօթնամեայ ծրագիրը:

Անիկա տեղակայուած է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան պաշտօնական կայքին մէջ: 18-էնոց փաստաթուղթը կը կրէ «ՀՀ Զինուած ուժերու 2018-2024թթ. արդիականացման ծրագիր» անուանումը:

«Արդիականացման ծրագիրով նախատեսուած համալիր ջանքերու շնորհիւ պիտի ապահովուի զինուած ուժերու վստահ մուտքը կայացման չորրորդ տասնամեակ, որպէս ՀՀ ազգային անվտանգութեան գլխաւոր երաշխիք: Այդ երաշխիքը պիտի ծառայէ որպէս հաւանական հակառակորդներու զսպող գործօն, «Ազգ-բանակ» հայեցակարգի իրագործման յուսալի աղբիւր եւ միջազգային արդիւնաւետ գործընկերութեան ծաւալման հարթակ», - նշուած է փաստաթուղթին մէջ:

Թուրքիոյ Մէջ Քաղաքացիութիւն Պիտի Տան 300,000 Տոլարի Անշարժ Գոյք Գնողին, Սակայն՝ Ոչ Հայերուն

ԵՐԵՒԱՆ, «Նիուզ».- Թուրքիոյ իշխանութիւնները, երկրին մէջ բնակարանաշինութեան աջակցելու եւ երկիրը օտարերկրեայ գումարներ ներգրաւելու նպատակով, պակսեցուցած են քաղաքացիութիւն ստանալու դիմաց անշարժ գոյք գնելու արժեքները:



Ըստ թրքական «Տիքէն» լրատու գործակալութեան՝ 2018ի Մայիսէն սկսեալ, Թուրքիոյ մէջ պիտի գործէ նոր օրէնք, որուն համաձայն՝ միայն 300,000 տոլար արժողութեամբ անշարժ գոյք գնող օտարերկրացին Թուրքիոյ քաղաքացիութիւն կրնայ ստանալ:

Նախապէս քաղաքացիութիւն կը տրուէր 1 միլիոն տոլար եւ ավելի գինով անշարժ գոյք գնողին, սակայն իշխանութիւնները նկատած են, որ գլխաւորաբար վաճառուող անշարժ գոյքը կը տատանի 300 հազար տոլարի սահմաններուն մէջ: Ուստի այս քայլին դիմած են, քանի որ երկրին մէջ կը նուազին բնակարաններու վաճառքի գիները:

Յիշեցնենք սակայն, որ ի զօրու կը մնայ տակաւին այն օրէնքը, ըստ որուն՝ Թուրքիոյ մէջ Հայաստանի եւ Հիւսիսային Քորէայի քաղաքացիները չեն կրնար բնակարան կամ այլ անշարժ գոյք գնել:

ՄԱԿ Թուրքիոյ Կոչ Կ' ուղղէ Ջնջելու Արտակարգ Դրութիւնն Ու Դադրեցնելու Մարդու Իրաւունքներու Խախտումները

ՄԱԿ Թուրքիոյ կոչ կ' ուղղէ՝ ջնջելու Յուլիս 2016-էն ի վեր գործող արտակարգ դրութիւնը, որ պատճառ դարձած է մարդու իրաւունքներու լայնածաւալ խախտումներու, ներառեալ 160 հազար մարդու ձերբակալութիւնը եւ շուրջ նոյն քանակութեամբ քաղաքային ծառայողներու աշխատանքէ վտարումը: Այս մասին կը հաղորդէ «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը:



ՄԱԿ-ի մարդու իրաւունքներու գրասենեակը յայտարարութիւն մը հրատարակելով յայտնեց, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան արտակարգ դրութիւն հաստատած է երկրին մէջ 2016-ին յեղաշրջման փորձէն ետք եւ արձակած աւելի քան քսան հրամանագիրներ, որոնք ձերբակալուածներու դէմ խոշտանգումներու, անպատժելիութեան եւ դատական մարմիններու աշխատանքին միջամտութեան պատճառ դարձած են:

«Թուրքիան պէտք է անյապաղ ջնջէ արտակարգ դրութիւնը եւ վերականգնէ հաստատութիւններու բնականոն գործունէութիւնն ու օրէնքի գերակայութիւնը», ըսուած է զեկուցումին մէջ:

ՄԱԿ նաեւ կը նշէ, որ հրամանագիրներու թիւը, յաճախականութիւնը եւ որեւէ ազգային սպառնալիքի հետ կապի բացակայութիւնը ցոյց կու տան, որ արտակարգ դրութիւնը կ' օգտագործուի քննադատութիւնը եւ այլախոհութիւնը ճնշելու համար:

«ՌԻԱ Նովրսթի», իր կարգին, կը հաղորդէ, թէ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը ՄԱԿ-ի զեկուցումը նկատած է անիմաստ եւ կողմնակալ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութիւն մը հրատարակելով յայտնեց, որ զեկուցումը անիմաստ է, որովհետեւ զայն կազմողները «ամբողջովին արհամարհած են» Թուրքիոյ ուղղուած ահաբեկչական վտանգները, ինչպէս նաեւ յեղաշրջումի փորձի հետեւանքները, որոնք կը սպառնային պետութեան ժողովրդավարական կեանքին եւ մարդու իրաւունքներուն:

«Մարդու իրաւունքներու հարցերով զերագոյն յանձնակատարին կողմէ հրատարակուած վերջին փաստաթուղթը կը բովանդակէ անհիմն մեղադրանքներ, որոնք կը համընկնին ահաբեկչական կազմակերպութիւններու քարոզչութեան հետ», յայտնած է նախարարութիւնը:

Անգարա կը յայտնէ, որ զեկուցումը կը նկատէ անընդունելի եւ զայն կը քննադատէ:

Թուրքիոյ ռազմական գործողութիւնը Սուրիոյ եւ Իրաքի մէջ հայերու կոտորածը կը յիշեցնէ. Եգիպտական զեկոյց

Թուրքիոյ ռազմական գործողութիւնը Սուրիոյ եւ Իրաքի մէջ ցեղային զտում է եւ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիոյ մէջ հայերու կոտորածը կը յիշեցնէ: Այս մասին կը նշուի Եգիպտոսի խորհրդարանի արաբական հարցերով յանձնաժողովի զեկոյցին մէջ:

Յայտարարութեան մէջ կը նշուի, որ բռնապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի՝ Սուրիոյ եւ Իրաքի մէջ քրեական արկածախնդրութիւնը միջազգային իրաւունքի լուրջ խախտում է եւ յարձակում է երկու երկիրներու տարածքներու ինքնիշխանութեան դէմ:

Յանձնաժողովը կը դատապարտէ այն փաստը, որ Ռուսիան եւ Միացեալ Նահանգները, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւնները այք կը փակեն Էրտողանի ռազմական յանցագործութիւններուն եւ Սուրիոյ ու Իրաքի մէջ քիւրտերու դէմ ուղղուած գործողութիւններուն վրայ, կը հաղորդէ «Նիուզ»-ը վկայակոչելով Ahram Online-ը:

Նիդեռլանդների խորհրդարանը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր է ընդունել

Նիդեռլանդների խորհրդարանի ներկայացուցիչների պալատն այսօր Հայոց Ցեղասպանության ճանաչման հռչակագիր է ընդունել:



Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի նախագահ Մաթո Հախվերդյանը հայտնել է, որ որոշումն ընդունվել է ձայների բացարձակ մեծամասնությամբ:

«Դեմ է քվեարկել միայն փոքրաթիվ խմբակցություններից մեկը, որի երեք անդամներն էլ ազգությամբ թուրք են: Բանաձևերն ընդունվեցին 142 կողմ ձայներով», - ասել է Հախվերդյանը:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող երկու բանաձևերը խորհրդարանական օրակարգ էր ներկայացրել այդ երկրի կոալիցիոն կառավարության մեջ մտնող «Քրիստոնեական միություն» կուսակցության անդամ Ջոել Ֆորդնինդը:

Առաջին բանաձևով վերահաստատվում է Նիդեռլանդների կողմից 2004 թվականին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին որոշումը, երկրորդով՝ Նիդեռլանդների կառավարությանը պարտադրվելու է հինգ տարին մեկ անգամ ապրիլի 24-ին նախարարի մակարդակով այցելել Հայաստան և հարգանքի տուրք մատուցել Օիժեռնակաբերդի հուշահամալիրում:

Ցեղասպանութեան Զոհերու Ոգեկոչման Բանաձեր Ներկայացուեցաւ Քալիֆորնիոյ Օրէնսդիր Մարմինին

ՄԱՔՐԱՄԵՆԹՕ.- Երկուշաբթի, Մարտ 26ին, Քալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանի անդամ Լորա Ֆրիտմըն նահանգային օրէնսդիր մարմինին ներկայացուց թիւ 37 միացեալ բանաձեր, որ 2018ի Ապրիլ 24ը կը հռչակէ «Քալիֆորնիոյ մէջ Հայոց Ցեղասպանութեան 103րդ ամեակի ոգեկոչման օր»: Ֆրիտմընին զօրակցեցան Քալիֆորնիոյ Օրէնսդիր մարմինի հայկական համախմբումի անդամներ Ատրին Նազարեան (խորհրդարանական) եւ ծերակուտականներ Մքաթ Ուիլք ու Էնթընի Փորթանթինօ:



Ֆրիտմըն յիշեցուց, թէ հայաշատ Կլենտէլի եւ Քալիֆորնիոյ տարածքին հայերը Ապրիլ 24ին կ' ոգեկոչեն հայ ժողովուրդին դէմ տեղի ունեցած ահաւոր ոճիրները, միաժամանակ խոստանալով նորոգել ատելութեան եւ անհանդուրժողութեան դէմ պայքարը աշխարհի տարածքին:

«Այս բանաձեր առիթ մըն է Քալիֆորնիոյ ժողովուրդին, որ յարգանքի իր տուրքը մատուցէ միլիոնաւոր հայ զոհերուն եւ պահանջէ իր ղեկավարներէն, որ դատապարտեն Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութիւնը ուրանալու իւրաքանչիւր փորձ», ակեցուց Ֆրիտմըն:


Բանաձեր նաեւ նշում կը կատարէ Օսմանեան կայսրութեան մէջ ապրած փոքրամասնութեանց օժանդակութեան հասած Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցին բարեսիրական ջանքերուն մասին, եւ կը դրուատէ ու կը քաջալերէ Ցեղասպանութեան իրականութիւնը իրենց համայնքներուն փոխանցողները եւ դասաւանդողները:

Ֆրիտմըն սոյն բանաձերը պիտի կարդայ Ապրիլ 23ին, խորհրդարանին մէջ նախատեսուած քուէարկութեան ընթացքին:

Կը նշուի նաեւ, որ Էրտողանի ձախողումները ներքին քաղաքականութեան մէջ ստիպած են զայն ռազմական արկածախնդրութիւններ սկսելու հարեւաններուն դէմ՝ այդպիսով վտանգելով խաղաղութիւնը եւ կայունութիւնը Մերձաւոր Արեւելքի մէջ: Խորհրդարանականները արաբական աշխարհին կոչ ուղղած են միաւորուելու Թուրքիոյ թշնամական քաղաքականութեան դէմ:



ΒΡΑΔΙΑ ΠΑΙΔΙΚΟΥ ΘΕΑΤΡΟΥ ΑΠΟ ΤΟΥΣ ΜΑΘΗΤΕΣ ΤΟΥ ΙΔΙΩΤΙΚΟΥ ΣΧΟΛΕΙΟΥ ΤΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΑΡΜΕΝΙΚΗΣ ΕΝΩΣΗΣ ΑΓΑΘΟΕΡΓΙΑΣ



«ΑΡΤΑΚΙ ΚΑΛΠΑΚΙΑΝ»

Τεράστια επιτυχία είχε για ακόμη μία χρονιά η «Βραδιά Παιδικού Θεάτρου» που διοργάνωσαν η Διεύθυνση, οι εκπαιδευτικοί και οι μαθητές του Σχολείου της Γ.Α.Ε.Α «Αρτάκι Καλπακιάν» το Σάββατο 17/03/2018 στην αίθουσα εκδηλώσεων «Χραντ και Λουίζ Φενερτζιάν».

Τέσσερα θεατρικά έργα μας ταξίδεψαν στον κόσμο της φαντασίας μέσα από το μεράκι των μικρών μας πρωταγωνιστών.



ΣΥΜΜΕΤΟΧΗ ΤΟΥ ΙΔΙΩΤΙΚΟΥ ΣΧΟΛΕΙΟΥ ΤΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΑΡΜΕΝΙΚΗΣ ΕΝΩΣΗΣ ΑΓΑΘΟΕΡΓΙΑΣ «ΑΡΤΑΚΙ ΚΑΛΠΑΚΙΑΝ» ΣΤΙΣ ΕΟΡΤΑΣΤΙΚΕΣ ΕΚΔΗΛΩΣΕΙΣ ΓΙΑ ΤΗΝ ΕΘΝΙΚΗ ΕΠΕΤΕΙΟ ΤΗΣ 25ης ΜΑΡΤΙΟΥ



Οι μαθητές του Ιδιωτικού Σχολείου της ΓΕΝΙΚΗΣ ΑΡΜΕΝΙΚΗΣ ΕΝΩΣΗΣ ΑΓΑΘΟΕΡΓΙΑΣ «Αρτάκι Καλπακιάν», συμμετείχαν για ακόμη μία χρονιά στις εκδηλώσεις εν όψει της επετείου της 25ης Μαρτίου, λαμβάνοντας μέρος στη μαθητική παρέλαση που διεξήχθη στη Λ. Ποσειδώνος, ανήμερα της εθνικής εορτής. Επιπλέον, έγινε κατάθεση στεφάνου εκ μέρους της Διοίκησης της Γ.Α.Ε.Α στο «Μνημείο των Πεσόντων Ηρώων» στο Π. Φάληρο από τον κ. Σέρκο Πατσσιάν, παρουσία εκπροσώπων των δημοτικών αρχών.

xxx

Հ.Բ.Ը.Մ.-եան Ա. Փալիպարեան Վարժարանի աշակերտները, այս տարի եւս պատուեցին «Մարտ 25»ի Ազգային տօնը, մասնակցելով աշակերտական սրահայցքին, որը տեղի ունեցաւ Փոստիստնոս պողոտային վրայ:

Առ ի յարանք Ազգային սովակապարտութեան, Հ.Բ.Ը.Մ.-եան Վարչական Վարչի կողմէ Պրն. Սերգոյ Փաշանեանը՝ դափնեպսակ զետեղեց, Փ. Ֆալիրոյի հերոս նահատակաց յուշակոթողին առջեւ, ներկայութեամբ քաղաքական եւ կուսակցական ներկայացուցիչներու:



Προς τιμήν των Αρμένιων συγγραφέων παρουσιάστηκαν στην αρμενική γλώσσα τα διηγήματα των Αβεντίκ Ισαχακιάν και Οβαννές Τουμανιάν με τίτλο: «Το πιο σπουδαίο αγαθό» και «Η στάμνα με το χρυσάφι» αντίστοιχα.

Οι μαθητές του Νηπιαγωγείου μας παρουσίασαν στην ελληνική γλώσσα μια εύθυμη «Παραμυθοσαλάτα» με μήνυμα οικολογικό, όπου οι ήρωες γνωστών παραμυθιών ανακατεύονται όλοι μαζί στη σκηνή, χαρίζοντας σε όλους άφθονο γέλιο.

Τέλος, ιδιαίτερα συγκινητική ήταν η ερμηνεία της γνωστής τραγωδίας του W. Shakespeare «Ρωμαιοί και Ιουλιέτα» στην αγγλική γλώσσα από τους μαθητές των μεγαλύτερων τάξεων του Σχολείου μας, οι οποίοι απέσπασαν το θερμό χειροκρότημα του κοινού.

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱԻԱԳ ՇԱԲՈՒԻԱՅ ԵՒ
ԶԱՏԿՈՒԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐՈՒՆ**

Գոքինիա

Երեկոյեան Ժամը 7.00ին

4 Ապրիլ 2018 – Աւագ Չորեքշաբթի

5 Ապրիլ 2018 – Աւագ Հինգշաբթի - Հաղորդութիւն

6 Ապրիլ 2018 – Աւագ Ուրբաթ - Խաչելութիւն

8 Ապրիլ 2018 - ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆ
Պաշտամունք Առաւօտեան Ժամը 11ին

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ 2018-Ի ԶԱՏԿԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ**

Ի գիտութիւն հաւատացեալ մեր ժողովուրդին կը տեղեկացնենք Փերիսթերիի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Ջատկական եկեղեցական արարողութիւններու ժամանակացուցակը.

ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 5 ԱՊՐԻԼ 2018

Հաղորդութեան Պատարագ Ժամը 10.00-ին
Ոտնլուայ՝ երեկոյեան Ժամը 6.00-ին
Խաւարում՝ երեկոյեան Ժամը 8.00-ին

ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ, 6 ԱՊՐԻԼ 2018

Կարգ Խաչելութեան Ժամը 12.00-ին
Կարգ Թաղման՝ երեկոյեան Ժամը 8.30-ին

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ, 7 ԱՊՐԻԼ 2018

Երեկոյեան Ժամերգութիւն Ժամը 7.00-ին
Ճրագալոյցի Պատարագ Ժամը 8.00-ին

Ս. ԶԱՏԻԿ, ԿԻՐԱԿԻ 8 ԱՊՐԻԼ 2018

Պատարագ Ժամը 10.00-ին

ՄԵՆԵԼՈՑ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 9 ԱՊՐԻԼ 2018

Հոգեհանգստեան կարգ Ժամը 11.00-ին



≤ KOKKINH ≥..... Παρέλαση!

Այս անգամ մեզ պիտի մարտնչեն 5 օտարակից օմադներ. Եթէ մեր օմադը կը յաջողուի յաղթել, յաջորդական օմադներու դէմ պիտի մարտնչենք 5 օմադներու դէմ:

Օր օր սինթետիկ դաշտերու վրայ վարձու տարածքներու վրայ օմադներու համար արդէն դժուար է հանգիստ գտնել. Եթէ մեր օմադը կը յաջողուի յաղթել, յաջորդական օմադներու դէմ պիտի մարտնչենք 5 օմադներու դէմ:

Եւ այս օրերու օմադներու համար դժուար է հանգիստ գտնել. Եթէ մեր օմադը կը յաջողուի յաղթել, յաջորդական օմադներու դէմ պիտի մարտնչենք 5 օմադներու դէմ:

Բաժնակազմի Երկուշաբթի / ՊՐՈՏԱԹԼԻՄ 5x5

Սպորտային Կոմպլեքս	Միջակայք	Միջակայք	Միջակայք	Միջակայք	Միջակայք	Միջակայք
ՄԻՔ ՉԵ	17	22	117	27	16	1
BIGENERGY	14	22	119	64	11	3
ԴՐԻՍՏԻՆԻ	16	22	75	60	9	3
MASSIS 1	18	22	188	83	19	2
ՓՐԱՊԵՃԱՆՔ	16	21	78	83	9	6
ANESSIS	17	19	183	77	9	8
ԵՆՏՈՒՆ	15	13	46	75	6	8
ՆՊՕՂԿԱՆԵՐՈՒ	14	4	52	89	2	12
ԿՐՈՔՈՍՏԻՆ	15	4	45	112	3	13
ԱՊԱՐԱԶԵՏՈՒ	18	4	94	158	2	18

Բաժնակազմի Երեքշաբթի / ՊՐՈՏԱԹԼԻՄ 5x5

Սպորտային Կոմպլեքս	Միջակայք	Միջակայք	Միջակայք	Միջակայք	Միջակայք	Միջակայք
MASSIS 2	19	25	120	66	14	1
BETERANCE	19	26	148	82	13	3
ՄԱԴՐԻ	18	21	88	87	8	6
ՆՊԱՄ և ԿԱՏՈ	19	20	111	108	9	7
ՆԵՔՏՐՈՒ	19	16	110	87	7	7
ՔԱՅԻՆՈՒ	17	16	94	91	7	8
ԱՊՅԱԼԻ	15	11	77	84	5	9
ԱՆԱԼՈՍՏԻՆ	15	8	73	118	4	11
ՆԵՐՍԻՍԻ Բ.Ը.	17	7	68	133	3	13
ՐՈՒՍ ԲԼԱՆԿՈՒ	12	8	62	84	2	8

Քաջալերեցէք հայ մամուլը

**ՅԻՇԱՏԱԿԻ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔ**

Պիտի կատարուի Յիշատակի Պաշտամունք նուիրում՝

**Բամբիշ՝
Սալբի Չոլաքեանի
մահուն**

10րդ տարեկիցին առթիւ

Կիրակի, 15 Ապրիլ, 2018,
երեկոյեան Ժամը 7.00ին
Գոքինիոյ Հայ Աւետարանական
Եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդութեամբ՝
Վեր. Վիգէն Չոլաքեանի

Պատգամաբեր՝
Վեր. Փոլ Հայտնութեան
(Նախագահ՝ Պէրոյի
Հայկազեան Համալսարանի
Եւ Ատենայեան ՄԱՀԱԵՄԻ
Կեդրոնական Մարմնի)

**ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
ՄԻՕՐԵԱՅ ՊՏՈՅՑ
13/5/2018**

Արարատ Մ.Մ.Միութեան
Տիկնանց Յանձնախումբ

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Մեփականութիւն
ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻԻՆ
Միսթու 33, Նիքեա, Յունաստան
Համակարգչային
շարուածքը եւ էջադրումը՝
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի
Տնօրէն՝
Ընկ. Սարգիս Խաչատուրեան
Արտոնատէր -
Փաստաբան՝
ընկ. Յակոբ Տէսճեան

“NOR ASKHAR”
Արմենիկ Եփոմեայեան
Եփոմեայեան
Իտիտիտիտ “APAPAT”
Փիլոլոլոլոլ Աթլիտիտիտ Տօմատիտիտ

Ընկ. Սարգիս Խաչատուրեան
Արտոնատէր -
Փաստաբան՝
ընկ. Յակոբ Տէսճեան
Տիտիտիտ 33 - TK 18450 - Նիքեա
Տիտիտ: 210-4926085
“NOR ASKHAR”
Armenian Cultural Social Weekly

33 Sistou Str.
GR 18450 NIKEA GREECE
Tel-Fax: 00+30+210-4926085

Բացի իմքաղաքականներէն,
յօղոտագիրներու տեսակէտ-
ներն ու գաղափարները անպայ-
մանօրէն չեն արտայայտեր թեր-
թին ուղեգիրը:

Հայաստան Կը Պատրաստուի Զբոսաշրջային Ծանրակշիռ Երկիր Դառնալու



«Զօրաց քարեր»-ու, Խոր Վիրապի տարածքները պիտի վերածուին զբոսաշրջային կեդրոններու: Հայաստանի մէջ պիտի բարեկարգուին զբոսաշրջական վայրերը, պիտի կառուցուին նոր կեդրոններ:

Համաշխարհային դրամատան եւ կառավարութեան միջեւ կնքուած վարկային համաձայնագրի ծիրէն ներս կը նախատեսուի Արարատի, Կոտայքի, Լոռիի, Միւնիքի, Վայոց Ձորի, Շիրակի մարզերուն մէջ Հարաւային միջանցք զբոսաշրջային զարգացման ռազմավարութեան եւ տեղական տնտեսութեան, ենթակառուցումներու զարգացման ծրագիր իրականացնել, որ պիտի նպաստէ պատմամշակութային, հոգեւոր եւ ճարտարապետական յուշարձաններու շրջակայքին զբոսաշրջային գոտիներու եւ սպասարկման կառոյցներու ստեղծման, տարածքային ենթակառուցումներու բարելաւման ու զարգացման:

Այս մասին, ըստ «Միութիւն»-ի, կը յայտնեն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամէն: Հիմնադրամէն նաեւ կը տեղեկացնեն, որ Գառնիի մէջ կը նախատեսուի «Քարերու սիմֆոնիա» բնական յուշարձանին յարող տարածքի բարեկարգում եւ դէպի յուշարձան տանող ճանապարհի վերակառուցում, Կիւմրիի մէջ՝ «Կոմայրի» պատմամշակութային արգելոցային գոտիի բարեկարգում, Միւնիքի մէջ՝ «Զօրաց քարեր» բնական յուշարձանին յարող տարածքին մէջ զբոսաշրջային կեդրոնի կառուցում, դէպի Տաթեւ վանական համալիր տանող ճանապարհի վերակառուցում, իսկ Արարատի մէջ՝ Խոր Վիրապ վանական համալիրին յարող տարածքին մէջ զբոսաշրջային կեդրոնի կառուցում:

Ասիական Զարգացման դրամատան ֆինանսական աջակցութեամբ կը նախատեսուի կեանքի կոչել «Երկրորդային քաղաքներու մէջ՝ որպէս աճի բեւեռ, առաջնահերթ հիմնախնդիրներու լուծման ծրագիրը», մասնաւորապէս Վանաձորի, Օտկաձորի, Մեւանի, Ջերմուկի մէջ պիտի իրականացուի քաղաքային միջավայրի, զբոսաշրջային եւ հանգստեան վայրերու բարեկարգման, ճանապարհներու վերականգնման, պատմամշակութային կառոյցներու պահպանման եւ բարելաւման գործընթացը:

Հայաստանի Մէջ Աստղերն Աւելի Մօտ Են. Ռուսաստանարեակ Ճանչցուած Հայերու Գովազդը



Մարիամ Պետրոսեանի վէպը՝ 21-րդ դարու 10 ամենարժեքեցուող գրքերու շարքին

Գրող եւ նկարիչ Մարիամ Պետրոսեանի երեւակայան «Տունը, ուր...» («The Gray House») ռուսալեզու վէպը ընդգրկուած է 21-րդ դարու 10 ամենարժեքեցուող գիրքերու շարքին:

Մարիամ Պետրոսեանէն բացի ցանկին մէջ ընդգրկուած են Ճորճ Մարթինի «Սառոյցի եւ կրակի երգը» վիպաշարը, Սթիվըն Քինկի «11/22/63»-ը, Կրեկորի Տէյվիտ Ռասպրոտսի «Շանթարամը», Քորմաք Մաքքարթիի «Ճանապարհը» եւ այլ ստեղծագործութիւններ:

«Մարիամ Պետրոսեան գիրքը սկսած է գրելու դեռ մանկութեան տարիներուն, աստիճանաբար ստեղծելով գլխաւոր հերոսները նկարներու եւ տառերու օգնութեամբ: Ձեռագրի վերջնական տարբերակը պատրաստ էր 1998-ին, իսկ անիկա հրատարակուեցաւ միայն 10 տարի անց: Գիրքը կը նկարագրէ հաշմանդամ երեխաներու կեանքը յատուկ գիշերօթիկ դպրոցի մէջ, որ կը կոչուի՝ Տուն:

Տունը ուղղակի գիշերօթիկ չէ, անիկա առանձին մուտրակ մըն է՝ լի իր գաղտնիքներով ու հանելուկներով»,- կը գրէ Մարիամ Պետրոսեանի վէպի մասին ռուսաստանեան Fraufleger հանդէսը:


Ամենաշատ վաճառուող գիրքերու ցանկը կազմուած է ըստ վաճառքի ծաւալներու մասին տուեալներու եւ գրական պարգէւներու:

Մարիամ Պետրոսեան ծնած է Երեւան, աւարտած է Թերլեմեզեանի անուան գեղարուեստի ուսումնարանը՝ «Նկարիչ-ձեւաւորող» մասնագիտութեամբ: 1989-ին աշխատանքի ընդունուած է «Հայֆիլմ»-ի մէջ: Երկու տարի աշխատած է Մոսկուայի մէջ: Վերադարձած է Հայաստան, 1995-2007 թուականներուն աշխատած է «Հայֆիլմ»-ի մէջ:

«Տունը, ուր...»-ը գրողին առաջին գիրքն է, որուն վրայ աշխատած է շուրջ տասնութ տարի՝ 1991-էն մինչեւ գիրքի հրատարակումը՝ 2009 թուականը:

Հայոց Ցեղասպանութեան մասին Ուքրանիոյ հայերու միութեան հեղինակած հոլովակը կը մասնակցի Կաննի փառատօնին

Ուքրանիոյ հայերու միութեան «Շնորհակալութիւն կրկին ծաղկելու հնարաւորութեան համար, հայեր» խորագիրը կրող հոլովակը, որ նուիրուած է Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին, ընտրուած է Կաննի 71-րդ փառատօնին մասնակցելու համար:



Շարժանկարի փառատօնին ընթացքին հոլովակը պիտի ցուցադրուի ոչ մրցութային CANNES SHORT FILM CORNER ծրագրի ծիրէն ներս: Անիկա ցուցադրութեան պիտի դրուի շարժանկարի շուկայի ուքրանական տաղաւարին մէջ:

Ուքրանիոյ հայերու միութեան մամուլի ծառայութիւնը նաեւ կը յիշեցնէ, որ հոլովակը արդէն իսկ մասնակցած է միջազգային փառատօններու:

Մասնաւորապէս, հոլովակը պատուաւոր երրորդ հորիզոնականը գրուած է Molodiya Festival հասարակական գովազդի փառատօնին: Անիմացիայի բեմադրիչներն են Անդրանիկ Պերպերեանը եւ անոր գործընկեր Անտրէյ Լիտակովսքին:

ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան Հայաստանը գովազդող տեսահոլովակ հրատարակած է Facebook ընկերային ցանցի իր էջին վրայ: Տեսանիւթը նաեւ գեղեցիկ խորագիր ունի. «Հայաստան. այնտեղ, որտեղ մօտ են աստղերը»:

Տեսահոլովակին մէջ նկարահանուած են Ռուսաստան ապրող տարբեր ոլորտներէ ճանչցուած հայեր, որոնք հպարտութեամբ կը նշեն Հայաստանի առաւելութիւնները եւ ռուսերուն, օտարներուն խորհուրդ կու տան անպայման այցելել այդ հնագոյն երկիր՝ ամէն ինչ սեփական աչքերով տեսնելու համար: